



Վիրահայոց Թեմուն ավադույթի ուժ է ստացել հայաբնակ շրջաններ այցելելու և տեղի եկեղեցիներում հոգևոր-մշակութային միջոցառումներ անցկացնելու նախաձեռնությունը: Այս անգամ այցելության վայրը Մառնեուլի շրջանի Շահումյան ավանն էր:

Հունիսի 15-ին ուխտավորաբար Թբիլիսիից Շահումյան էր ժամանել Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը՝ ուղեկցությամբ Թեմի «Հայարտուն» կենտրոնի ստեղծագործական խմբերի: Հյուրերին դիմավորեցին տեղի հանրային դպրոցի տնօրեն Արտյուշ Ուրումյանը, Մառնեուլի շրջանային ժողովում Շահումյան գյուղից ընտրված եղիկ Գասպարյանը և ուրիշներ:

Առավոտյան Շահումյանի «Սուրբ Աստվածածին» եկեղեցում, որը կառուցվել է 19-րդ դարի առաջին կեսին, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մառնեուլիի շրջանի հայ համայնքների հոգևոր հովիվ Տեր Մովսես քահանա Աշուրյանը:

Հավարտ Պատարագի հավուր պատշաճի քարոզ խոսեց Թեմակալ Առաջնորդը: Սրբազան Հայրը համայնքի անդամներին հորդորեց շարունակել քրիստոնեական և ազգային ավանդությունների պահպանումը համայնքում: Անդրադառնալով օրվա խորհրդին նա նշեց, որ Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցին հունիսի 15-ին նշում է Սբ. Գրիգոր Լուսավորչի

նշխարների

գյուտի

տոնը: Վիրահայոց Առաջնորդը հավատացյալներին բացատրեց, որ

Մայր

Աթոռ

Սբ

.

Էջմիածնում

պահվող

Գրիգոր

Լուսավորչի

Սբ

.

Աջը

Հայ

Եկեղեցու

կարեւորագույն

սրբություններից

մեկն

է

,

որով

օրհնվում

է

սրբազան

մյուռոնը և հայոց բոլոր եկեղեցիների նման այստեղ ևս տոնը արժևորվեց Սուրբ

Պատարագով:

Եկեղեցական արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ մշակութային ծեռնարկ, որին մասնակցեցին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոնի «Անի» պարային համույթը (պարուսույց՝ Անգելինա Նազարյան-Քոչյան) և անհատ կատարողներ: Համերգը վարեց կենտրոնի տնօրեն և մշակույթի բաժնի վարիչ Լևոն Զիդիլյանը: Տոնական մթնոլորտը թևածեց համայնքից ներս՝ մեծ ոգևորություն առաջացնելով գյուղի հասարակության շրջանում, որի համար Թբիլիսիից ժամանած հյուրերին գյուղի համայնքի և հասարակության անունից շնորհակալություն հայտնեց տեղի հանրային դպրոցի տնօրեն Արտյուշ Ուրումյանը:

